

### Թեմա 3. ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

Ողջույն, շարունակում ենք ֆինանսական կրթության մեր դասընթացը, որի շրջանակներում այսօր խոսելու ենք բյուջեի պլանավորման մասին:

Թե՛ անձնական ու ընտանեկան, և թե՛ բիզնեսի համար անչափ կարևոր է բյուջեի պլանավորումը, որը հիմք է դառնում ֆինանսների արդյունավետ կառավարման համար:

Եվ այսպես, եկեք տեսնենք, թե ի՞նչ է բյուջետավորումը և ինչո՞ւ է այն կարևոր ձեռնարկատիրոջ համար:

Բյուջետավորումը մեր ֆինանսների պլանավորման և կառավարման ռազմավարական գործընթացն է, այն է՝ եկամուտների և ծախսերի պլանավորումը: Բյուջետավորում իրականացնելով մենք հստակ պատկերացում ենք ստանում, թե որտեղից են գալիս մեր գումարները և ուր են գնում:

Մինչև բյուջետավորման սխեմայի դիտարկումը, եկեք տեսնենք, թե ի՞նչ սկզբունքներ են կիրառելի եկամուտների և ծախսերի պլանավորման դեպքում:

Նախևառաջ նշենք, որ եկամուտների աղբյուրները լինում են տարբեր, օրինակ՝

- Աշխատավարձ,
- Կենսաթոշակ,
- Ավանդի դիմաց ստացվող տոկոսային վճարներ,
- Գույքի, հողատարածքի կամ սարքավորումների վարձակալության դիմաց ստացվող վարձավճարներ և այլն:

Եկամուտ ստանալու ևս մեկ աղբյուր համարվում է ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտը: Ինչո՞ւ է տարբերվում եկամտի այս տեսակն արդեն վերը թվարկվածներից:

Տարբերություններն, իրականում, շատ են: Օրինակ, նայենք եկամտի ստացման աղբյուրը: **Անձնական եկամուտն** այն գումարն է, որն անհատը վաստակում է տարբեր աղբյուրներից, ինչպիսիք են աշխատավարձերը, ներդրումները, վարձակալությունը և այլն: Դե իսկ **ընկերության եկամուտը** ձևավորվում է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում՝ ապրանքների կամ ծառայությունների վաճառքից,

ներդրումներից կամ բիզնեսի հետ կապված որևէ այլ գործունեությունից: Սովորաբար, անձնական եկամուտն օգտագործվում է անձնական ծախսերը հոգալու համար՝ բնակարան, սնունդ, կրթություն, առողջապահություն, ժամանց, խնայողություններ և այլն: Ընկերության եկամուտը, իր հերթին, հիմնականում օգտագործվում է բիզնեսը վարելու և ընդլայնելու համար: Այն հատկացվում է գործառնական ծախսերը հոգալու, աշխատակիցների աշխատավարձերի, հետազոտությունների ու զարգացման նախագծերի, մարքեթինգի, աճին ուղղված ներդրումների, ներդրողներին շահաբաժինների տրամադրման և այլ նպատակներով:

Կան նաև բազում այլ տարբերություններ, օրինակ, և՛ Ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց եկամուտները ենթակա են հարկման, պարզապես նախատեսված հարկերը տարբեր են:

Դիտարկենք նաև ծախսերը:

Նախ եկեք ծանոթանանք երկու հասկացությունների հետ, որոնք ընկած են ծախսերի տարանջատման հիմքում. դրանք են՝ **հաստատուն և փոփոխուն ծախսերը**:

Անհատի տեսանկյունից այս ծախսերի դասակարգման հիմքում ընկած է դրանց կատարման հաստատունությունը: Հաստատուն ծախսեր են, օրինակ, սննդի, կոմունալ վճարների, գույքահարկի և հողի հարկի, վարձակալության համար կատարվող ծախսերը, որոնք յուրաքանչյուր ամիս անհրաժեշտ է կատարել՝ անկախ եկամտի չափից: Փոփոխուն ծախսեր համարվում են հագուստի, թանկարժեք իրերի գնման, տոների անցկացման, բնակարանի համար իրերի և աքսեսուարների գնման ծախսերը: Այս տեսակի ծախսերի կատարումը չի բխում անհրաժեշտությունից և դրանք կարող են նաև չլինել, եթե անհատը չունի բավարար եկամուտ:

Բիզնեսում ծախսերը ևս տարանջատվում են հաստատունի և փոփոխունի, բյուջեի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է դրանք շատ հստակ տարանջատել, որպեսզի հնարավոր լինի հասկանալ թե, օրինակ, որքան եկամուտ է հարկավոր ունենալ նվազագույն հաստատուն ծախսերի կատարման համար:

Հաշվարկերի ընթացքում ծախսերն առավել հեշտ և հասկանալի դասակարգելու համար ուսումնասիրում ենք վերջիններիս կապը արտադրության ծավալի հետ:

Այսպես, հաստատուն ծախսերի մեջ ներառվում են այն ծախսերը, որոնք համեմատաբար կայուն են և կախված չեն արտադրված/վաճառված ապրանքների

ծավալից: Հաստատուն ծախսերից են համարվում վարձակալական վճարները, վարչական անձնակազմի աշխատավարձերը և այլն:

Այսինքն, հաստատուն ծախսերը անփոփոխ են գործունեության կամ թողարկման տարբեր ծավալների դեպքում. որքան էլ որ փոխվի արտադրության ծավալը, միևնույն է՝ հաստատուն ծախսերը մնում են անփոփոխ:

Իսկ ահա փոփոխուն են համարվում այն ծախսերը, որոնց մեծությունը կախված է թողարկվող արտադրանքի ծավալից և ուղղակիորեն փոփոխվում է արտադրության ծավալին համամասնորեն: Այսինքն փոփոխուն ծախսերը փոխվում են գործունեության կամ թողարկման ծավալներին զուգընթաց. որքան մեծանում է արտադրության ծավալը, այնքան զուգահեռ մեծանում են նաև փոփոխուն ծախսերը: Օրինակ, եթե դուք հաց եք թխում, այլուրի ծախսը կլինի փոփոխուն, որովհետև որքան շատ հաց թխեք, այնքան շատ այլուր կսպառվի, իսկ եթե նվազեցնեք արտադրվող հացի ծավալը, համապատասխանաբար կնվազի նաև սպառվող այլուրի քանակն և, հետևաբար, ծախսը:

Փոփոխուն ծախսեր են համարվում ապրանքանյութական, տրանսպորտային ծախսերը, արտադրության աշխատողների աշխատավարձը և այլն:

Նշենք, որ ձեռնարկատիրական գործունեության դեպքում եկամուտների և ծախսերի տարբերությունն անվանում ենք շահույթ: Բյուջետավորման գլխավոր խնդիրն է ավելացնել եկամտի չափը և կրճատել ծախսերն այնպես, որպեսզի դա չազդի ձեռնարկատիրական նպատակների և արտադրանքի որակական չափանիշների վրա:

Երբ խոսում ենք բյուջետավորման մասին, ապա առաջ է գալիս մեկ շատ կարևոր հասկացություն ևս, այն է՝ խնայողությունը:

Սովորաբար, ինչպես հաճախ ենք տեսնում մեր միջավայրում, մարդիկ խնայողություն են համարում եկամտի և ծախսի տարբերությունը, որն առաջանում է, երբ եկամուտն ավելին է, քան ծախսը.

Եկամուտ - ծախս = Խնայողություն

Առավել արդյունավետ բյուջետավորման սխեման հետևյալն է.

Եկամուտ - խնայողություն = Ծախսեր

Իհարկե խնայողությունների թեմային կանոնադաշտնանք ավելի ուշ, բայց ավելորդ չենք համարի նշել, որ խնայողություններ կատարելը պետք է դառնա մեր կյանքի սովորություններից մեկը: Իսկ ահա որքան խնայել, դա արդեն այլ հարց է, և անգամ մասնագետների կարծիքներն այս հարցում տարբեր են:

Որոշներն առաջարկում են 80/10/10 սկզբունքը՝ գումարի 10% խնայել + 10%-ը կիսել ուրիշների հետ + 80%-ը ծախսել:

Որոշներն առաջարկում է 50/30/20 մոտեցումը, որը ենթադրում է եկամտի 50%-ն ուղղել կարիքներին, 30%-ն ուղղել ցանկություններին, 20%-ը հատկացնել խնայողություններին:

Դե ինչ, մի բան պարզ է, խնայողություններ կատարելը կարևոր է, այնպես որ դրանց մասին առավել հանգամանորեն կխոսենք հաջորդ՝ խնայողություններին նվիրված տեսադասում: